ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 11/12 «22» 01 2020թ.

2019/2020 ՈՒՍՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաստատել 2019/2020 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը: Բոլոր ստորաբաժանումներին՝ խստորեն հետևել ժամանակացույցում նշված աշխատանքների կատարմանն առանց լրացուցիչ գրավոր կամ բանավոր հիշեցումների: Ժամանակացույցում նշված ժամկետները չպահպանելը դիտել որպես կատարողական կարգապահության խախտում և դարձնել հատուկ քննարկման առարկա ռեկտորատի նիստերում:

Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր Է. Վ. Ասրիյանի, բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր Ռ. Հ. Բարխուդարյանի և ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյանի վրա:

Ռեկտորի
ժամանակավոր պաշտոնակատար՝ Գ.Գ. Գևորգյան

1. 2019/2020 ուստարվա 2-րդ կիսամյակի ժամանակացույց

1. 2019/2020 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական պարապմունքներն ավարտել.

ա/ առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ոչ ավարտական կուրսերի համար հունիսի 5-ին,

բ/ առկա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսի համար ապրիլի 3-ին,

գ/ հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ոչ ավարտական կուրսերի համար մայիսի 30-ին,

դ/ հեռակա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսի համար ապրիլի 18-ին:

2. 2019/2020 ուստարվա 2-րդ կիսամյակի ստուգարքների ընդունումը կազմակերպել.

ա/ առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ոչ ավարտական կուրսերի համար հունիսի 1-ից մինչև հունիսի 5-ը,

բ/ առկա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսի համար մարտի 30-ից մինչև ապրիլի 3-ը,

գ/ հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ոչ ավարտական կուրսերի համար մայիսի 25-ից մինչև մայիսի 30-ը,

դ/ հեռակա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսի համար ապրիլի 13-ից մինչև ապրիլի 18-ը:

3. 2019/2020 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանն անցկացնել.

ա/ առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ոչ ավարտական կուրսերի համար հունիսի 8-ից մինչև հունիսի 26-ը, իսկ հեռակա ուսուցման ոչ ավարտական կուրսերի համար հունիսի 1-ից մինչև հունիսի 27-ը,

բ/ առկա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսի համար ապրիլի 6-ից մինչև ապրիլի 11-ը,

գ/ հեռակա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսի համար ապրիլի 20-ից մինչև ապրիլի 25-ը:

4. Ուսման վարձավճարի պարտք ունեցող ուսանողներին արգելել մասնակցել ստուգարքներին ու քննություններին (այդ թվում ընթացիկ): Ամսական վճարման պարագայում 1-ին ընթացիկ քննություններին թույլատրել մասնակցել 2 ամսվա ուսման վարձը վճարելուց հետո:

5. Պարտքերի մարում սահմանել.

ա/ առաջին լուծարքային շրջան՝ օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 8-ը (առկա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսի համար ապրիլի 14-ից մինչև ապրիլի 17-ը, հեռակա ուսուցման՝ ապրիլի 28-ից մինչև մայիսի 2-ը),

բ/ երկրորդ լուծարքային շրջան՝ սեպտեմբերի 14-ից մինչև սեպտեմբերի 22-ը (առկա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսի համար ապրիլի 20-ից մինչև ապրիլի 23-ը, հեռակա ուսուցման՝ մայիսի 6-ից մինչև մայիսի 11-ը):

6. Առկա ուսուցման շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը կազմակերպել 2020թ. մայիսի 4-ից մինչև մայիսի 29-ը, իսկ մանկավարժի լրացուցիչ կրթության համար մինչև հունիսի 10-ը:

7. Հեռակա ուսուցման շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը կազմակերպել 2020թ. հունիսի 1-ից մինչև հունիսի 30-ը:

8. Պրակտիկան սկսվելուց 15 օր առաջ ԵՊՀ պրակտիկայի բաժին ներկայացնել պրակտիկա անցնող ուսանողների վերաբերյալ հրամանների նախագծերը՝ ուսանողներին տեղաբաշխելով ըստ նախապես համաձայնեցված պրակտիկայի անցկացման վայրերի: Պրակտիկայի ավարտից հետո 20-օրյա ժամկետում ներկայացնել պրակտիկաների հաշվետվությունները:

2. Ֆակուլտետների կողմից ուսումնամեթոդական վարչություն փաստաթղթերի ներկայացման ժամանակացույց

<u>Հունվար</u>

* Հունվարի 24-ից 31-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարքերի առկա և հեռակա ուսուցման ուսանողների վերահանձնման դիմումները ցուցակով՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով:

* Մինչև հունվարի 24-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել լուծարքային հանձնաժողովների հրամանների նախագծերը:

* Մինչև հունվարի 31-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել տվյալներ առկա ուսուցման ուսանողների շրջանում ուսանողների առցանց հարցում կազմակերպելու համար:

<u>Փետրվար</u>

* Փետրվարի 1-ից 7-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման ժամանակացույցը և քննական հանձնաժողովների կազմը:

* Մինչև փետրվարի 3-ը կազմակերպչական բաժին ներկայացնել առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայի շրջանավարտների անձնագրային տվյալները (ա.,ա.,հ. 3 լեզվով)՝ դիպլոմների լրացման համար:

* Մինչև փետրվարի 3-ը բակալավրիատի բաժին ներկայացնել 2-րդ կիսամյակի ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսների վերաբերյալ զեկուցագրերը:

* Մինչև փետրվարի 5-ը կազմակերպչական բաժին ներկայացնել անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների գործերը:

* Մինչև փետրվարի 6-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն (ձև 10):

* Մինչև փետրվարի 7-ը կազմակերպչական բաժին ներկայացնել առկա և հեռակա ուսուցման մագիստրանտների ավարտական հրամանները:

* Մինչև փետրվարի 7-ը կազմակերպչական բաժին ներկայացնել առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները (ըստ 4-րդ ձևի):

* Մինչև փետրվարի 18-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 1-ին կիսամյակի քննաշրջանի 1-ին լուծարքի արդյունքների վերաբերյալ քանակական տվյալները:

* Մինչև փետրվարի 20-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել հեռակա ուսուցման 2-րդ կիսամյակի դասատախտակները:

* Մինչև փետրվարի 20-ը կազմակերպչական բաժին ներկայացնել առկա ուսուցմամբ վերականգնված ուսանողների վերակնքված պայմանագրերը:

* Մինչև փետրվարի 25-ը մագիստրատուրայի բաժին ներկայացնել տվյալներ՝ պետական վիճակագրական ծառայություն ներկայացնելու համար (ձև 1-ԳՄ):

<u>Մարտ</u>

* Մինչև մարտի 2-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել տվյալներ հեռակա ուսուցման ուսանողների շրջանում ուսանողների առցանց հարցում կազմակերպելու համար:

* Մինչև մարտի 2-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել առկա ուսուցման ընթացիկ քննությունների ժամանակացույցերը:

* Մինչև մարտի 3-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման արդյունքները սահմանված ձևով:

* Մինչև մարտի 4-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ քանակական տվյալները, իսկ հաշվետվության 34 ձևը՝ ուսումնական գործընթացի վերահսկման բաժին:

* Մինչև մարտի 4-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 1-ին կիսամյակի քննաշրջանի 2-րդ լուծարքի վերաբերյալ արդյունքներն ըստ սահմանված ձևի:

* Մինչև մարտի 6-ը կազմակերպչական բաժին ներկայացնել առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների անձնագրային տվյալները (ա.,ա.,հ. 3 լեզվով)՝ դիպլոմների լրացման համար:

* Մինչև մարտի 6-ը կազմակերպչական բաժին ներկայացնել առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ դիմումները՝ կցելով անհրաժեշտ հիմքերը: Դիմումների ընդունումը կազմակերպվում է փետրվարի 10-ից:

* Մինչև մարտի 11-ը բակալավրիատի բաժին ներկայացնել բակալավրիատի ավարտական կուրսերի քննաշրջանի ժամանակացույցը:

* Մինչև մարտի 13-ը բակալավրիատի բաժնի հետ, սահմանված ձևով մուտքագրել բակալավրիատի առկա ուսուցման 2020-2024թթ. և հեռակա ուսուցման 2020-2025թթ., իսկ մագիստրատուրայի բաժնի հետ՝ մագիստրատուրայի առկա ուսուցման 2020-2022թթ. և հեռակա ուսուցման 2020թ.-ից սկիզբ առնող ուսումնական պլանները «SuperVision» ծրագրում:

* Մինչև մարտի 13-ը կազմակերպչական բաժին ներկայացնել հեռակա ուսուցմամբ վերականգնված ուսանողների վերակնքված պայմանագրերը:

* Մինչև մարտի 16-ը բակալավրիատի բաժին ներկայացնել առաջարկություններ 2020/2021 ուստարվա լեզվական առարկաների միացյալ դասատախտակի վերաբերյալ:

* Մինչև մարտի 17-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 1-ին կիսամյակի քննաշրջանի 1-ին լուծարքի արդյունքների վերաբերյալ քանակական տվյալները:

* Մինչև մարտի 20-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել տվյալներ՝ առկա ուսուցման ավարտական կուրսերի ուսանողների շրջանում ուսանողների առցանց հարցում կազմակերպելու համար:

* Մինչև մարտի 20-ը կազմակերպչական բաժին ներկայացնել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածուների տվյալները:

* Մինչև մարտի 25-ը կազմակերպչական բաժին ներկայացնել հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ դիմումները՝ կցելով անհրաժեշտ հիմքերը: Դիմումների ընդունումը կազմակերպվում է մարտի 9-ից:

* Մինչև մարտի 27-ը կազմակերպչական բաժին ներկայացնել առկա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսի լուծարքային հանձնաժողովի կազմը:

* Մինչև մարտի 27-ը կազմակերպչական բաժին ներկայացնել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի վերաբերյալ հրամանների նախագծերը:

<u>Ապրիլ</u>

* Մինչև ապրիլի 2-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի 2-րդ լուծարքի արդյունքներն ըստ սահմանված ձևի:

* Մինչև ապրիլի 3-ը բակալավրիատի բաժին ներկայացնել հեռակա ուսուցման ավարտական կուրսի 2-րդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

* Մինչև ապրիլի 3-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել հեռակա ուսուցման ընթացիկ քննությունների ժամանակացույցը:

* Մինչև ապրիլի 3-ը պրակտիկայի բաժին ներկայացնել 2020/2021 ուստարվա համար նախատեսված պրակտիկաների ծրագրերը:

* Մինչև ապրիլի 3-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել 2020/2021 ուստարվա կամընտրական դասընթացներին ցուցակագրված ուսանողների թիվն ըստ առարկաների:

* Ապրիլի 4-ից 10-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի առկա և հեռակա ուսուցման ուսանողների վերահանձնման դիմումները ցուցակով՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով:

* Մինչև ապրիլի 7-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժինների հետ մուտքագրել առկա և հեռակա ուսուցման աշխատանքային ուսումնական պլանները «SuperVision» ծրագրում:

* Մինչև ապրիլի 8-ը կազմակերպչական բաժին ներկայացնել ամփոփիչ ատեստավորման գործընթացի ժամանակացույցը: Հանձնաժողովների նիստերը կազմակերպել ամփոփիչ ատեստավորման վերջին օրվան հաջորդող օրը, որից հետո մեկ օրվա ընթացքում ներկայացնել ուսանողների ավարտման հրամանների նախագծերը: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահները հաշվետվություններ են ներկայացնում վերջին քննությունից հետո հինգ օրվա ընթացքում (ըստ 4-րդ ձևի):

* Մինչև ապրիլի 9-ը բակալավրիատի բաժին ներկայացնել մանկավարժի լրացուցիչ որակավորում ստանալու համար ուսանողների թիվն ըստ կրթական ծրագրերի:

* Ապրիլի 11-ից 17-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման ժամանակացույցը և քննական հանձնաժողովների կազմը:

* Մինչև ապրիլի 10-ը համապատասխան պրոռեկտորին ներկայացնել 2020/2021 ուստարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տետրերի քանակը՝ նշելով տետրերի ծավալը (էջերի թիվը): *Պատվերի և պահեստից ստանալու համար ներկայացվում է մեկ զեկուցագիր:*

* Մինչև ապրիլի 10-ը համապատասխան պրոռեկտորին ներկայացնել 2020/2021 ուստարվա համար անհրաժեշտ դասամատյանների քանակը՝ նշելով տեսակը (փոքր, միջին, մեծ): *Պատվերի և պահեստից ստանալու համար ներկայացվում է մեկ զեկուցագիր:*

* Մինչև ապրիլի 14-ը կազմակերպչական բաժին ներկայացնել առկա ուսուցման ավարտական կուրսի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ քանակական տվյալները, իսկ հաշվետվության 34 ձևը՝ ուսումնական գործընթացի վերահսկման բաժին:

* Մինչև ապրիլի 17-ը կազմակերպչական բաժին ներկայացնել հեռակա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսի լուծարքային հանձնաժողովի կազմը:

* Մինչև ապրիլի 20-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել տվյալներ հեռակա ուսուցման ավարտական կուրսերի ուսանողների շրջանում ուսանողների առցանց հարցում կազմակերպելու համար:

* Մինչև ապրիլի 28-ը կազմակերպչական բաժին ներկայացնել բակալավրիատի հեռակա ուսուցման ավարտական կուրսի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ քանակական տվյալները, իսկ հաշվետվության 34 ձևը՝ ուսումնական գործընթացի վերահսկման բաժին:

* Մինչև ապրիլի 28-ը կազմակերպչական բաժին ներկայացնել բակալավրիատի առկա ուսուցման ավարտական կուրսի քննաշրջանի 2-րդ լուծարքի արդյունքներն ըստ սահմանված ձևի:

* Մինչև ապրիլի 30-ը մագիստրատուրայի բաժին ներկայացնել առկա ուսուցման 1-ին և 2-րդ կուրսերի թեզի ատեստավորման արդյունքները:

<u>Մայիս</u>

* Մինչև մայիսի 4-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման արդյունքները սահմանված ձևով:

* Մինչև մայիսի 13-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել առկա և հեռակա ուսուցման քննաշրջանի ժամանակացույցերը:

* Մինչև մայիսի 14-ը կազմակերպչական բաժին ներկայացնել հեռակա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսի քննաշրջանի 2-րդ լուծարքի արդյունքներն ըստ սահմանված ձևի:

* Մինչև մայիսի 20-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժինների հետ մուտքագրել առկա և հեռակա ուսուցման ամբիոնային բեռնվածությունները և դասախոսների անհատական բեռնվածությունները «SuperVision» ծրագրում:

* Մինչև մայիսի 29-ը մագիստրատուրայի բաժին ներկայացնել հեռակա ուսուցման 2-րդ կուրսի թեզի ատեստավորման արդյունքները:

* Մինչև մայիսի 29-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել տվյալներ առկա և հեռակա ուսուցման ուսանողների շրջանում 2019/2020 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսանողների առցանց հարցում կազմակերպելու համար:

<u>Հունիս</u>

* Հունիսի 1-ից 10-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման ընթացակարգի 2.11-րդ կետին վերաբերող դիմումները:

* Մինչև հունիսի 3-ը մագիստրատուրայի բաժին ներկայացնել հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի թեմաները և հրամանագրված ղեկավարներին:

* Մինչև հունիսի 3-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն (ձև 10):

* Մինչև հունիսի 4-ը ֆակուլտետային կայքում տեղադրել 2020/2021 ուսումնական տարվա առկա ուսուցման 1-ին կուրսի ուսանողների համար նախատեսված կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցների և դասընթացների տեղեկագրքերի նյութերը:

* Մինչև հունիսի 5-ը կազմակերպչական բաժին ներկայացնել ուսումնաօժանդակ համակազմի հաստիքացուցակը՝ ուսումնաօժանդակ համակազմի հաստիքների ձևավորման նորմերին համապատասխան:

* Մինչև հունիսի 10-ը բակալավրիատի բաժին ներկայացնել ֆակուլտետների գիտական խորհուրդներում քննարկած կուրատորների հաշվետվությունների վերաբերյալ քաղվածքները (Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան):

* Հունիսի 10-ից 20-ը կազմակերպչական բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման ընթացակարգի 2.11-րդ կետով նախատեսված առարկայական պարտքերի վերահանձնման քննական հանձնաժողովների կազմը:

* Հունիսի 20-ից 30-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել առկա և հեռակա ուսուցման ուսանողների՝ մինչև 12 կրեդիտ առարկայական պարքերի վերահանձնման դիմումները՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով, իսկ ժամանակացույցը և քննական հանձնաժողովների կազմը՝ մինչև հուլիսի 5-ը:

<u>Հուլիս</u>

* Մինչև հուլիսի 1-ը կազմակերպչական բաժին ներկայացնել ուսումնաօժանդակ համակազմի ատեստավորման արդյունքները:

* Մինչև հուլիսի 1-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ քանակական տվյալները, իսկ հաշվետվության 34 ձևը՝ ուսումնական գործընթացի վերահսկման բաժին:

* Մինչև հուլիսի 3-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն (ձև 10):

* Մինչև հուլիսի 8-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել ուսանողների՝ կուրսից կուրս փոխադրման հրամանները:

* Մինչև հուլիսի 8-ը ֆակուլտետային կայքերում տեղադրել 2020/2021 ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման 1-ին կուրսի ուսանողների համար նախատեսված կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցների և դասընթացների տեղեկագրքերի նյութերը:

* Մինչև հուլիսի 15-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել 2020/2021 ուստարվա 1-ին կիսամյակի առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի դասատախտակները:

* Մինչև հուլիսի 16-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել առկա և հեռակա ուսուցման լուծարքային հանձնաժողովների հրամանների նախագծերը:

<u>Օգոստոս</u>

* Մինչև օգոստոսի 26-ը ֆակուլտետների մանդատային հանձնաժողովներում հաստատել փոխատեղման (ռոտացիա) հավակնորդների ցուցակները և ներկայացնել կազմակերպչական բաժին: 1-ին լուծարքին մասնակցող հավակնորդների առկայության դեպքում ներկայացնել մինչև սեպտեմբերի 10-ը:

* Մինչև օգոստոսի 31-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել 2020/2021 ուստարվա 1-ին կիսամյակի հեռակա ուսուցման դասատախտակները (բացառությամբ 1-ին կուրսի):

Ռեկտորի

ժամանակավոր պաշտոնակատար՝ Գ.Գ. Գևորգյան